ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. նոյեմբերի 1-ից 4-ը Ուկրաինա
կատարած գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**
   Արման Խոջոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Ուկրաինա՝ ք. Կիև, 2021թ. նոյեմբերի 1-4-ը

4. **Հրավիրող կողմը՝**
   Ուկրաինայի ագրարային քաղաքականության և սննդի նախարարություն

5. **Գործուղման նպատակը՝**

«Wine&Spirits Ukraine 2021» միջազգային ցուցահանդես /երկրի մասնակցություն/ Գյուղատնտեսության ոլորտում փորձի փոխանակման, հայ-ուկրաինական երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների զարգացման վերաբերյալ քննարկումներ

6. **Քննարկված թեմաները՝**
   - Երկու երկրների միջև առևտրատնտեսական հարաբերությունների ամրապնդմանն ուղղված քայլերի իրականացում,
   - Հացահատիկային մշակաբույսերի ներմուծմանն ու մատակարարմանն առնչվող հարցերի քննարկում,
   - Անասնաբուծության բնագավառում ուկրաինական փորձի ուսումնասիրություն, խոշոր եղջերավոր անասունների բուծման համակարգի ներդրման հնարավորությունների դիտարկում,
   - Երկկողմ համագործակցության հնարավորությունների դիտարկում գիտակրթական ծրագրերի իրականացման և թվային գյուղատնտեսության բնագավառում:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝**

- Հանդիպում Ուկրաինայի ագրարային քաղաքականության և սննդի նախարար Ռոման Լեշչենկոյի հետ: Հանդիպմանը ներկա էին նաև Ուկրաինայի գյուղատնտեսության ոլորտի գիտական հաստատությունների տնօրեններ և մասնավոր հատվածի ներկայացուցիչներ: Կողմերը քննարկել են հարցերի լայն շրջանակ, մասնավորապես հողերի շուկայի բարեփոխումներին, թվային գյուղատնտեսությանը, ոռոգման, անասնակերի արտադրության, անասնաբուծության ոլորտներում փորձի փոխանակման և Ուկրաինայից դեպի Հայաստանի Հանրապետություն խոշոր եղջերավոր անասունների ներկրմանն առնչվող հարցեր, ինչպես նաև երկկողմ առևտրատնտեսական համագործակցության հեռանկարները:

  Բացի այդ անդրադարձ է կատարվել երկու երկրների գիտական հաստատությունների միջև համագործակցության հաստատման հնարավորությանը՝ Հայաստանում խոշոր եղջերավոր անասունների բուծման համակարգի ներդրման նպատակով:
- Հանդիպում Ուկրաինայի սոցիալական քաղաքականության հարցերով նախարար, հայ-ուկրաինական միջկառավարական հանձնաժողովի նախագահ Մարիա Լազեբնայի և նախարարի տեղակալ Օլգա Ռեվուկի հետ: Հանդիպման ընթացքում կողմերը անդրադարձել են Հայաստան-Ուկրաինա տնտեսական համագործակցության հարցերին, կարևորել են միջկառավարական հանձնաժողովի նիստերի անցկացումը՝ որպես արդյունավետ հարթակ համագործակցության, հեռանկարային ոլորտները խորացնելու և բացահայտելու համար, մասնավորապես, երկու երկրների բիզնեսի ներկայացուցիչների միջև երկխոսության կազմակերպման ապահովման և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտների բացահայտման տեսանկյունից:
- Հանդիպում Ուկրաինայի էկոնոմիկայի նախարարի տեղակալ Տարաս Կաչկայի հետ: Հանդիպման ընթացում կողմերն անդրադարձել են երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների ամրապնդմանն ու զարգացմանն ուղղված քայլերին, քննարկել Ուկրաինայից դեպի Հայաստանի Հանրապետություն ցորենի և հացահատիկային այլ կուլտուրաների մատակարարմանն առնչվող հարցեր: Որպես առևտրային վստահելի գործընկեր և գյուղատնտեսական ապրանքների առաջատար արտահանող՝ ուկրաինական կողմը պատրաստակամություն է հայտնել ապահովել պարենային ապրանքների և հումքի անխափան մատակարարումը դեպի Հայաստանի Հանրապետություն:

  Քննարկվել են նաև էներգաարդյունավետության ոլորտում համագործակցության խորացման, բազմամոդուլ բեռնափոխադրումների զարգացման, իրավասու մարմինների

միջև բույսերի պաշտպանության և կարանտինի ոլորտում համագործակցության հնարավորություններ:

- «Wine&Spirits Ukraine 2021» Արևելյան Եվրոպայի ոլորտային ամենանշանակալի գինու և ալկոհոլային խմիչքների միջազգային ցուցահանդեսում հայկական գինեգործական 10 ընկերության ներկայացվածության ապահովում, գինիների ճանաչելիությանն ուղղված միջոցառումների իրականացում Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի հետ համատեղ: Հայկական գինիները ներկայացվել են ազգային միասնական տաղավարով՝ «Հայաստան՝ գինու նվիրական երկիր» խորագրով:
- Հանդիպում Կիևի մարզպետ Վասիլի Վոլոդինի հետ: Կողմերն ընդգծել են, որ 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում ավելացել են ապրանքաշրջանառության ծավալները երկու երկրների միջև, մասնավորապես գյուղատնտեսական ապրանքների արտահանման բնագավառում: Անդրադարձ է կատարվել Կիևի մարզից հացահատիկային կուլտուրաների մատակարարման հնարավորությանը դեպի Հայաստանի Հանրապետություն, լոգիստիկ լուծումների ապահովմանը, պետական և մարզային համակարգմամբ իրականացվող ծրագրերի իրականացմանը:
- Այցելություն Ուկրաինայի Չերկասի շրջանի Կաթ արտադրողների անասնապահական ֆերմա՝ «Կիշչենցի» ՍՊԸ, հանդիպում ընկերության ներկայացուցիչների հետ: Ընկերությունը զբաղվում է անասնաբուծությամբ, բուսաբուծությամբ, հացահատիկային և արդյունաբերական մշակաբույսերի արտադրությամբ: Հանդիպման ընթացքում Արման Խոջոյանը տեղում ծանոթացել է կաթնամթերքի արտադրության տեխնոլոգիական գործընթացներին:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

10. Ստորագրությունը, ամսաթիվը՝

09.11.2021թ.